ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

31 հոկտեմբերի 2017 թվական

2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.05

Տարոն Մարգարյան

- Երևանի ավագանու անդամնե՛ր, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 18 անդամ՝

Մարինա Խաչատրյան՝ «Երկիր Ծիրանի» խմբակցություն,

Սոննա Աղեկյան՝ «Երկիր Ծիրանի» խմբակցություն,

Հայկ Պետրոսյան՝ Երևանի ավագանու անդամ,

Դավիթ Խաժակյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Արայիկ Հարությունյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Անի Սամսոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Ալեն Սիմոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Տիգրան Ավինյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Զարուհի Բաթոյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Էդուարդ Աղաջանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Հարություն Բաբայան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Գրիգոր Մինասյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Աննա Ասատրյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Անուշ Հայրյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Կամո Հովհաննիսյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Արա Երնջակյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Առաջին հարցը՝ «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ Մարինա Խաչատրյան, խնդրե՛մ։

Մարինա Խաչատրյան

- Շնորհակալությու՛ն, «Երկիր Ծիրանի» կուսակցության և խմբակցության ծրագրերի առաջնահերթությունների շարքում է՝ պայքարել կոռուպցիայի և չարաշահումների դեմ։ Այս համատեքստում ուզում եմ անպայման անդրադառնալ համատիրությունների խնդրին։

Մենք այցելել ենք Երևանի 12 վարչական շրջաններ, որոնց այցելությունների ժամանակ քաղաքացիները շատ բողոքներ էին ներկայացնում համատիրությունների աշխատանքներից։ Փաստացիորեն՝ նրանք նշում էին, որ կատարում են ամենամսյա վճարումներ համատիրությանը, որը որևէ գործառույթ չի իրականացնում և համատիրության գործառույթների մեջ մտնող և՛ մաքրության հարցերի, և՛ վերանորոգման հարցերի բեռը, այսպես թե այնպես, մնում է քաղաքացիների ուսերին։

Այստեղ ուզում եմ ես իմ հարցը հնչեցնել. առաջին հարցը՝ ինչպե՞ս մենք պետք է կարգավորենք այս համատիրությունների հարցը, որովհետև սա մեծ կոռուպցիոն մեխանիզմ է գործող, և մեր ծրագրի վրա հիմնվելով, մենք պետք է պայքարենք այս կոռուպցիոն մեխանիզմի դեմ։

Երկրորդ հարցը վերաբերում է վերելակաշինությանը։ Կա արդյոք համագործակցություն ԽՍՀՄ փլուզումից հետո Սպիտակում կառուցված վերելակաշինական գործարանի հետ։ Մենք նույնպես այցելել ենք այդ գործարան, ավելի ճիշտ՝ գործարանի տարածք, այն խայտառակ վիճակում է և մաս-մաս է արվում, վաճառվում է, և ի՞նչ պլաններ ունեք վերելակաշինական ոլորտում՝ գտնվելով մի պետության մեջ, որտեղ կա վերելակաշինական գործարան։ Շնորհակալություն։

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը, խնդրե՛մ։

Կամո Արեյան

-Առաջին հարցի հետ կապված. հայտնի է, որ բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» և «Համատիրության մասին» օրենքների հիման վրա և

կառավարության որոշմամբ ընդունված մեկ փաստաթուղթ՝ պարտադիր նորմերի ցանկը և դրանց պարտադիր պահպանման կանոնների վերաբերյալ։

Համատիրությունների գործունեության մեջ առկա են բազմաթիվ թերություններ։ Համատիրության համակարգը, որպես այդպիսին՝ շենքերի կառավարման համակարգ, օրենսդրորեն ամբողջովին չի կարգավորվում, ուստի՝ ամենակարճ ճանապարհն ընտրվել է հետևյալը՝ ընդունել «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» նոր օրենք։

Վարչապետի որոշմամբ, այժմ ստեղծված է աշխատանքային խումբ, որի մեջ ներառված են նաև քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ընթանում են նախագծի մշակման աշխատանքներ, որտեղ արմատապես վերանայվելու է օրենսդրորեն ամբողջ համակարգի կառավարումը։

Հույս ունենանք կարճ ժամկետում այդ օրենքի նախագիծը կներկայացվի կառավարության կողմից քննարկման։

Երկրորդ հարցի հետ կապված՝ նույն բազմաբնակարան շենքի կառավարման տեսանկյունից ամենացավոտ, ամենահրատապ, անհետաձգելի իրագործման ոլորտն է վերելակային տնտեսությունը։ Այսօր ծրագրի քննարկման շրջանակներում եղավ, որ դա համարվում է քաղաքի զարգացման գերակա ուղղություններից մեկը, ոչ միայն գերակա, այլև անհետաձգելի։

Քաղաքապետի առաջարկությամբ արդեն բանակցային գործընթաց է ընթանում միջազգային խորհրդատու ներգրավելու, վերելակային տնտեսության ոչ միայն ամբողջովին նորացման, այլև կառավարման ամբողջ համակարգը մեկ ամբողջությամբ լուծելու։

Ինչ վերաբերում է վերելակային տնտեսության նախկին վերելակաշինական գործարաններին. Սպիտակի գործարանն այլևս չունի այդ հնարավորությունը վերելակ արտադրելու, իսկ Երևանի վերելակային տնտեսության թարմացման հայեցակարգը պատրաստ լինելուն պես, իհարկե մենք նկատի կունենանք թե շուկայում առկա որ արտադրանքի վերելակից կարելի է օգտվել։ Սպիտակը միակ բազան չի և Սպիտակը գոյություն չունեցող գործարան է այսօր։

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ Սոննա Աղեկյան, խնդրե՛մ:

Սոննա Աղեկյան

-Շնորհակալությու՛ն, այսօր երևանցին երթևեկում է յուրաքանչյուր քաղաքացու ինքնասիրությունը ոտնահարող հանրային տրանսպորտով, ինչով երթևեկը վտանգում է քաղաքացիների կյանքը, առողջությունը, նյարդերը։ Արդեն երկու տասնամյակ գումարներ ենք ծախսում անիմաստ խորհրդատվական ծառայությունների վրա, սակայն մինչ օրս ոչ

այնքան զարգացած երկրներից բերում և շահագործում ենք իրենց մոտ անպիտան, շահագործումից դուրս մղված, տեխնիկապես անսարք վիճակում գտնվող միկրոավտոբուսներ: Ինչպիսի՞ն է պայմանավորվածությունը, դեռ երկար ենք օգտվելու օտար երկրներում գրանցված և վճարովի խորհրդատվություններից՝ խորհրդատվության անվան տակ փոշիացնելով Երևան համայնքի հանրային միջոցները: Շնորհակալություն:

Երկրորդ հարցը. այս տարի համագործակցությունը հայտնի Սուրենյանի հետ ինչպե՞ս է, պատրաստվում ենք ձմռանը, թե՞ ամեն տարվա նման առաջին ձյունն անսպասելի է գալու՝ հանկարծակիի բերելով և կատվածահար անելով մեր քաղաքի ողջ երթևեկն ու մայրաքաղաքում առաջացնելով քաղաքացիների կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներ:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը, իսկ Սուրենյանի հետ մենք համագործակցություն չունենք, իրեն հարցը կուղղեք, ինքը կպատասխանի:

Վահե Նիկոյան

-Հասարակական տրանսպորտի կարգավորումը, որպես օրակարգային խնդիր և հնգամյա ծրագրում նախատեսված հարց, որն ամբողջությամբ լուծվելու է, ես առիթ ունեցա մանրամասն ներկայացնելու զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում, բայց հաշվի առնելով, որ հարցը հնչել է, փորձեմ ավելի մանրամասնել:

Հասարակական տրանսպորտի ոլորտը համակարգային բարեփոխումների է ենթարկվում, բարեփոխումների ձևաչափին ծանոթ եք: Երևանի քաղաքապետի որոշմամբ՝ դեռևս տարեսկզբին ստեղծվել է աշխատանքային խումբ, որտեղ նաև Ձեր խմբակցությունն ունի ներկայացուցիչ, բացի այդ, խորհրդատուի աշխատանքները մեկնարկել են հունվարի 1-ից: Կատարված աշխատանքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է աշխատանքային խմբին, բացի այդ, ստեղծվել է «transport.yerevan.am» կայքը, որտեղ ներկայացված են առայսօր կատարված աշխատանքները, ինչպես նաև, ուղիղ հեռարձակվում են աշխատանքային խմբի հանդիպումները:

Առաջին հերթին, խնդիրը վերաբերում է նոր երթուղային ցանցի մշակմանը, այդ գործընթացը բավականին ծավալուն գործընթաց է, այն ընթացքի մեջ է, առաջիկայում խորհրդատուն արդեն վերջնականացնում է երթուղային ցանցը: Դրա որոշ բաղադրիչների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են, և նոր երթուղային ցանցի վերջնական ներկայացման և ամփոփումից հետո այն կներկայացվի, առաջին հերթին, աշխատանքային խմբի ձևաչափում, այնուհետև կանցնի նաև հանրային քննարկումների բոլոր փուլերը:

Ըստ նախատեսվածի՝ նոր երթուղային ցանցով նաև հասկանալի կլինի, թե Երևան քաղաքի արդյունավետ և փոխլրացնող հասարակական տրանսպորտի ցանցի պարագայում ինչ տրանսպորտային միջոցներ, ինչ տեսականի և ինչ քանակներով անհրաժեշտ կլինի, որը նաև կհստակեցնի այն ներդրումների չափը, թե որքան գումար է անհրաժեշտ այդ բարեփոխումներն ամբողջությամբ իրականացնելու համար։

Բազմաթիվ անգամ նշել ենք, որ Երևանի քաղաքապետարանը ստանձնել է այդ պարտավորությունը և ամբողջությամբ պատասխանատու է այդ բարեփոխումներն անկախ ձևաչափից իրականացնելու, որին, կարծում ենք, դուք առարկայական ականատես կլինեք արդեն հաջորդ տարի։

Ինչ վերաբերում է որակավորումներին, ինչ ենք գնել, ումից, ինչքան միկրոավտոբուս, համենայնդեպս, քաղաքապետարանը նման գործառույթներ չի իրականացրել։

Սոննա Աղեկյան

-Իսկ ձյու՞նը։

Տարոն Մարգարյան

-Պատասխանեցինք, Սուրենյանի հետ մենք չենք համագործակցում, իրեն կդիմեք, ինքը կպատասխանի։ Ցանկություն ունեիք իմանալ համագործակցում ենք, թե ոչ. մենք նման համագործակցություն չունենք։

Սոննա Աղեկյան

-Այսինքն, հանկարծակիի ենք գալու, առաջին ձյունը տեղալու է, հանկարծակիի ենք գալու։ Երևանի քաղաքապետարանը պատրաստ չէ։

Տարոն Մարգարյան

-Միասին կքննարկեք և եզրակացության կգաք։

Սոննա Աղեկյան

-Բայց իմ հարցը Ձեզ էր ուղղված։

Տարոն Մարգարյան

-Պատասխանը լսեցիք։

Հաջորդ հարցը՝ Երևանի ավագանու անդամ Հայկ Պետրոսյան, խնդրե՛մ։

Հայկ Պետրոսյան

-Շնորհակալությու՛ն, իմ հարցն ուղղված է վարչական շրջանների ղեկավարներին, մասնավորապես՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին։ Մոտ 10 օր առաջ ես իմ գործընկերներից մեկի հետ ականատես եղանք մի երևույթի, որն այսօր ևս մի քանի անգամ բարձրացվել է՝ երթևեկությունը խոչընդոտող կանգնակներ երթևեկելի մասում և, ցավոք սրտի, տնտեսվարողի հետ որևէ բացատրական աշխատանք չհաջողվեց կատարել, և մենք

ստիպված եղանք դիմել ճանապարհային ոստիկանությանը, որպեսզի նրանք գան և բռնագրավեն այդ կանգնակները: Ընդամենը մի քանի օր անց, սակայն, ես վարչական շրջանի շենքում, ես տեղեկացված եմ, որ վարչական շրջանի շենքում կային նաև ուրիշ տնտեսվարողներ, ականատես եղա նույն երևույթին, այսինքն՝ նույնպես կային երթևեկությունը խոչընդոտող կանգնակներ հենց վարչական շրջանի շենքի դիմաց: Ում համար էր դա նախատեսված, չեմ կարող ասել, սակայն ինձ թվում է, որ այդ երևույթի դեմ պայքարելու նպատակով մեզնից յուրաքանչյուրը ևս պետք է պայքարի:

Ես ուզում եմ հարցս ուղղել նախ և առաջ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին, այսինքն՝ արդյոք ինքը տեղյակ է, թե ո՞ւմ համար են այդ կանգնակները կանգնեցվում և ու՞մ մեքենան է:

Երկրորդ հարցը, ավելի ընդհանուր, քանի որ վարչական շրջանում կան աշխատակիցներ, որոնց գործառույթների մեջ կա նաև բնակարաններ այցելելը, հնարավոր կլինի իրենց առաջադրել, որպեսզի երբ նրանք ականատես են լինում, նրանք ևս իրենց քաղաքացիական պարտքը կատարեն, զանգահարեն ճանապարհային ոստիկանություն և աջակցեն մեր քաղաքացիներին, որպեսզի այդ կանգնակների հարցը իսկապես լուծվի, որովհետև դա շատ շատերին է անհանգստացնում: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Հովհաննես Վարդանյանը:

Ինչ վերաբերում է ընդհանուր Երևան քաղաքի կանգնակներին, տեղեկացնեմ, որ մեր խորհրդակցությունների ժամանակ մեզ համար օրակարգային խնդիր է այս հարցը, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության համար է այս խնդիրն օրակարգային: Քաղաքապետի խորհրդական պարոն Գևորգյանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության ամբողջ կազմը, ճանապարհային ոստիկանության հետ համագործակցելով, այդ հարցի կարգավորման ուղղությամբ ամենօրյա աշխատանք են տանում: Եվ կխնդրենք ավագանու անդամներին նման երևույթներ նկատելու դեպքում տեղեկացնել քաղաքապետարան, որպեսզի մենք ճանապարհային ոստիկանության հետ քայլեր ձեռնարկենք:

Հովհաննես Վարդանյան

-Հարգելի՛ քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, կա նման խնդիր, դրանով մենք ճանապարհային երթևեկության կանոններն ենք կանոնակարգում, բայց Ձեր հարցից հետո կվերանայենք և ավելի արդյունավետ տարբերակներ կգտնենք:

Հայկ Պետրոսյան

-Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալությու՛ն, հարցս վերաբերում է Տերյան 127, 131 հասցեներով տեղակայված նախկին շենքերի տարածքին, որոնք 2003թ. կառավարության կողմից ճանաչվեցին հանրային գերակա շահ:

Քաղաքապետարանը «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքեց պայմանագիր, որով պարտավորվում էր 3 տարի ժամկետում ավարտել քաղաքաշինական ծրագիրը և համապատասխան ժամկետում ավարտել նաև օտարված գույքի ձեռքբերումը: Մինչդեռ տեղյակ ենք, որ ներկայումս այնտեղ դեռ տեղակայված է շենքերից մեկը, կիսավեր վիճակում և փաստացի կա դատական վեճ, որը, բնականաբար, այդ անձանց մասով է և դատական խնդրի առարկա է հանդիսանում: Քաղաքապետարանի և «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագիրը, կարծում եմ, արդեն վերաբերում է քաղաքապետարանի գործունեությանը:

Հարցս վերաբերում է սրան, արդյոք քաղաքապետարանը դիտարկել է «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի վերանայման հարցը, այն մասով, որ «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ-ն խախտել է և՛ կառուցման, և՛ օտարման ժամկետները: Ինչպե՞ս է հնարավոր նման դեպքերում, երբ հանրային գերակա շահ ճանաչված տարածքը, ըստ էության, չի ստացվում նոր կառուցապատումն անել: Կա արդյոք ընթացակարգ, որով հնարավոր է նոր կառուցապատողի հետ կնքել պայմանագիր և նոր կառուցապատողի վրա դնել այն պարտավորությունը, որով նաև պետք է իրականացվի փոխհատուցման աշխատանքները: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը, խնդրեմ:

Զավեն Առաքելյան

-Շնորհակալությու՛ն, ինչպես Դուք նշեցիք, Տերյան փողոց 127 հասցեի ամբողջ շրջակայքը ժամանակին ճանաչվել է գերակա հանրային շահ և կառուցապատող «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր, որով ամրագրվել են կառուցապատողի կամ իրացնողի երկու պարտավորությունները. առաջինը՝ կատարել

այդտեղ գտնվող անշարժ գույքի իրացում և երկրորդ՝ կյանքի կոչել քաղաքաշինական ծրագիրը, այն հիմքով, որով այդ տարածքը ճանաչվել է հանրային գերակա շահ։

Պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության հետ, ուղղակի այն ժամանակ Հայաստանի Հանրապետությանը ներկայացրել է մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետը։ Հետագայում այդ պայմանագրի իրականացման շրջանակներում շուրջ 80% տարածք իրացվել է և այդտեղ գտնվող անձանց տրվել է փոխհատուցում։ Դեպքեր կան նաև, որ ունենք պայմանագրային պարտավորություններ, որով նաև պետք է այլ գույքով տրվեր փոխհատուցում: Այս մասով ևս մենք լիարժեք տեղեկատվություն ունենք, սակայն քաղաքաշինական ծրագրի ժամկետները, ինչպես Դուք նշեցիք պարոն Խաժակյան, դատական վեճերի արդյունքում երկարացվել են։ Նման դրույթ նախատեսված է պայմանագրում, որ եթե առկա են դատական վեճեր, ապա քաղաքաշինական ծրագրի սկսելու ժամկետը, կամ այդ քաղաքաշինական ծրագրի վերջնաժամկետն այդ նույն ժամկետով համարվում է երկարացված։

Կարևորելով սակայն տարածքը հնարավորինս արագ կառուցապատելու անհրաժեշտությունը և հանրային գերակա շահի այդ քաղաքաշինական ծրագրի իրագործումը՝ Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունները դեռևս մեկ տարի առաջ սկսել են կառուցապատողի հետ քննարկումները։ Մենք պահանջել ենք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որպեսզի կարողանանք հասկանալ այդ ամբողջ գործընթացի վերջնավարտը կամ քաղաքաշինական ծրագրի սկիզբը երբ է նախատեսում կառուցապատողն իրականացնել։ Այսուհետ քննարկումները շարունակվում են: Մենք հետամուտ ենք լինելու, որպեսզի պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները կառուցապատողն ամբողջությամբ ավարտի։

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն պատասխանի համար, պարոն Առաքելյան։ Ես միայն ցանկանում եմ ճշտել. Դուք նշեցիք, որ 10 տարի այս նշված ժամկետը երկարացվել է, և աշխատանքները տարվում են ավարտին հասցնելու համար։ Սահմանված է արդյոք նոր ժամկետ, որքան է դա և ինչ եք կարծում այս իրացման գործընթացը և կառուցապատումը, ընդհանուր առմամբ, դեռ որքան ժամանակ կտևի, հաշվի առնելով, որ 2003թ. որոշումը կա, սակայն այս գործընթացն առայսօր երկարում է։

Զավեն Առաքելյան

-Կառուցապատողի հետ աշխատանքները դեռևս վերջնական չեն ավարտվել, կառուցապատման քաղաքաշինական ծրագրերի վերջնաժամկետի վերաբերյալ պայմանագրերում դեռևս փոփոխություններ կատարված չեն: Երբ բոլոր հարցերի

պատասխաններն ունենանք, բնականաբար, պայմանագրում պարտադիր կներառենք այնպիսի հստակ պարտավորություններ, որպեսզի կառուցապատողը ևս մեկ անգամ ստանձնի նոր ժամկետով այդ ծրագիրն իրականացնելու պարտավորություն և պատասխանատվություն կրի դա չիրականացնելու համար։

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Արայիկ Հարությունյան, խնդրե՛մ։

Արայիկ Հարությունյան

-Շնորհակալությու՛ն, երեկ Արմավիրի մարզի մանկապարտեզներից մեկում տեղի ունեցած միջադեպից հետո, մամուլում կրկին սկսեցին խոսել մանկապարտեզներում և դպրոցներում անվտանգության խնդրի մասին։

Ես այսօր Ձեզ մի գրություն եմ գրել, պարոն Մարգարյան, որտեղ նկարագրել եմ, որ որոշ մանկապարտեզների դեպքում այստեղ խնդիրներ կան։

Հարցս հետևյալն է. ի՞նչ լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվում մանկապարտեզների և դպրոցների անվտանգությունն ապահովելու համար։

Երկրորդ հարցս վերաբերում է ապօրինի շինարարություններին։ Այնպիսի տպավորություն է, որ որոշ դեպքերում այս շինարարություններն իրականացնողները կոնկրետ աջակցություն ունեն որոշ վարչական շրջանների կամ քաղաքապետարանի աշխատողների կողմից։ Կոնկրետ օրինակներ կարող եմ բերել՝ Արաբկիր վարչական շրջանի Մանուշյան 86 և Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 1 հասցեները։

Բաղրամյան 1 հասցեի դեպքում արդեն երկրորդ ահազանգն եմ հնչեցնում։ Այստեղ ոմն քաղաքացի Մանուկ Մանուկյանի կողմից անընդհատ շինարարություն է իրականացվում։ Մի շինարարությունն արդեն օրինականացվել է, ես ստացել եմ նամակը, բայց ինձ համար տարօրինակ է, որ այս մարդը շաբաթը մեկ մի ապօրինի բան իրականացնում է և ինձ համար տարօրինակ է, թե ամեն դեպքի առիթով ինչի նա չի տուգանվում։ Ձավեշտը հասել է նրան, որ ես ստացել եմ երեկ «Թեժ գծի» արձագանքը. ես զանգել ասել էի, որ ցանցապատ տարածք է առաջացել այդտեղ, ինձ ուղարկել են, որ ցանցը հանել են, բայց նկարի վրա ցանցապատ այդ տարածքը կա։

Նույնը Մանուշյան 86 հասցեում է, մարդն այդպես թեք մի ճանապարհի վրա իր տան դիմաց հավասարեցրել է, ավտոտնակ է իր համար փաստացի ստեղծել և այս ապօրինությունն արդեն մեկ ամիս է չի վերացվում։

Տարոն Մարգարյան

-Ապօրինի շինությունների հետ կապված Ձեր հարցին կպատասխանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Հայկ Ասատրյանը։

Ինչ վերաբերում է առաջին հարցին՝ կապված մանկապարտեզների անվտանգության և հսկողության հետ, այո՛ մենք պետք է անվտանգության պայմաններն ուժեղացնենք, ինչպես նաև խնդրելու ենք Ոստիկանության Երևան քաղաքի վարչությանը, որպեսզի իրենք նույնպես ուժեղացնեն հսկողությունը և տեսնենք հետագայում անվտանգության առումով ինչ քայլեր ենք ձեռնարկելու։

Խնդրե՛մ, պարոն Ասատրյան։

Հայկ Ասատրյան

-Մանուշյան 86 հասցեի հետ կապված՝ մինչ Ձեր կողմից այդ հարցի բարձրաձայնելը, մեր կողմից հայտնաբերվել էր այդ դեպքը։ Քաղաքացին երթևեկելի մասում փորձել էր ոչ թե ավտոտնակ կառուցել, այլ առանձնացնել թեքությամբ իր համար կայանատեղ։ Այդ դեպքի առիթով կազմվել է համապատասխան արձանագրություն և սահմանված կարգով ուղարկվել, որպեսզի վարչական պատասխանատվության ենթարկվի քաղաքացին։

Մեր ծառայությունների կողմից նույնպես քայլեր են ձեռնարկվել, այնտեղ փաստացի հողի լիցք է կատարվել, մնացել է միայն ասֆալտապատման հետ կապված աշխատանքը։ Մենք նաև գրավոր իրազեկել ենք իրավախախտին, որպեսզի քայլեր ձեռնարկի, այն ինչ-որ վարչարարությունն է պահանջում, իսկ իր կողմից չիրականացնելու դեպքում, բնականաբար, համայնքը կանի հետագայում՝ բռնագանձելով իրավախախտից այդ ամենը։

Ինչ վերաբերում է Բաղրամյան 1 հասցեին՝ դեռևս ամիսներ առաջ քաղաքացու կողմից իր՝ նախկինում գոյություն ունեցող շինության վերակառուցման փաստի առթիվ, այն ժամանակ դեռ իրավախախտումն արձանագրվել է և սահմանված կարգով վարչական պատասխանատվության է ենթարկվել քաղաքացին։

Ձեր կողմից մատնանշված վերջին շրջանում կատարված նախաձեռնությունները, դրանք իրենց բնույթով արդեն չեն եղել այնպիսին, որ պետք էր արձանագրվել, ուղղակի նախաձեռնման փուլում կանխվել են այդ գործողությունները։ Քաղաքացին փորձել է իր՝ արդեն ունեցած սեփական շինության հարակից հատվածում որոշակի բարեկարգման, բարելավման աշխատանքներ անել, որը կանխվել է մեր կողմից։

Արայիկ Հարությունյան

-Նախկինում էլ ինքը նմանատիպ աշխատանքների արդյունքում է այդ ապօրինի շինարարություններն իրականացրել, որոնք օրինականացվել են։ Ընդորում, այդ բարեկարգումը, որ ասում եք, արդեն օրինականացված շինության կողքին, բավականին մեծ տարածք էր, որը մտել էր բակային տարածք։ Միայն այդ տնտեսվարողի հետ կապված այդ տարածքում նաև այլ բազմաթիվ խնդիրներ կան, մասնավորապես՝ Բաղրամյան 1 հասցեին կպած այդ կարկանդակի պատրաստման հայտնի կետի խնդիրն է, որը որևէ կերպ չի

վերացվում, հակասանիտարական վիճակը չի վերացվում։ Ինչպես իմ խոսքում նշեցի, տպավորություն է, որ այդ մարդը շատ հստակ հովանավորներ ունի տարբեր ատյաններում։

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, պարոն Հարությունյան։

Հանձնարարական Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին, քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետին և հասարակական կարգի պահպանության ծառայության պետին. այս հասցեն վերցրեք ձեր հսկողության տակ, երբ որ նման խնդիրներ լինեն, անմիջապես լուծում տրվի։

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Սամսոնյան, խնդրե՛մ։

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն, իմ հարցն ուղղված է Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Արա Սադոյանին: Ես ամիսներ առաջ դիմել էի Կենտրոն վարչական շրջան և խնդրել էի միջոցառումներ ձեռնարկել «Բելիս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր վերանայելու համար:

Ես մանրամասն հիմնավորել էի, որ այդ ընկերությունը, լինելով շինարարական ընկերություն, սպասարկում է հանրային զուգարանի մաքրման աշխատանքներ, որը գտնվում է կենտրոնում: Ես պարբերաբար այցելել եմ այդ տարածք, խոսել եմ բնակիչների հետ և պարզվել է, որ այդ զուգարանում մաքրման աշխատանքներ չեն կատարվել, այլ բնակիչները, ովքեր օգտվում են դրանից, ժամանակ առ ժամանակ մաքրել են այն: Ես ուզում եմ հասկանալ, թե ի՞նչ նպատակով է բյուջեից դուրս գրվել 920 000 ՀՀ դրամ, քանի որ այդ ընկերությունը ծառայություն չի մատուցել և պարզվել է, որ այդ ընկերությունը նախկինում ճակատագրի բերումով պատկանել է Արա Սադոյան անուն-ազգանունով անձին:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Արա Սադոյանը, խնդրե՛մ:

Արա Սադոյան

-Հարգարժա՛ն պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, ես ստացել եմ մեր հարգարժան ավագանու անդամի դիմումը և պատասխանել եմ: Այնտեղ ամբողջությամբ լուսանկարներով և բնակիչների գոհունակությունով Ձեզ ուղեկցող նամակով ուղարկել եմ, որ մշտական կատարվել են մաքրման աշխատանքներ, եղել են, իհարկե, թերություններ, որոնց մասին մենք ընկերությանը զգուշացրել ենք: Ժամանակավոր խնդիրներ են եղել նաև դռան հետ կապված, ամբողջովին վերանորոգվել է և այսօր այն բնականոն կարգով գործում է: Դուք կարող եք այցելել և համոզվել ինքներդ։

Անի Սամսոնյան

-Պարոն Սադոյան, ուզում եմ ասել, որ ես չեմ ստացել Ձեր նամակը, այն ստանալուց հետո կուսումնասիրեմ, բայց շարունակում եմ պնդել, որ այնտեղ մաքրման աշխատանքներ չեն կատարվել: Իսկ եթե կատարվել են, դա եղել է արդեն մեր ուսումնասիրությունից և հետաքրքրությունից հետո:

Արա Սադոյան

-Բնակիչներն այլ բան են վկայում:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ:

Անի Խաչատրյան

-Էրեբունի փողոցում կա, եթե չեմ սխալվում, բազմաբնակարան 34, 35 շենք: Խնդրում եմ ինձ մատնանշեք մեկ շենք, որի բակում կա խաղահրապարակ կամ մեկ խաղային պարագա: Փոխարենը վարչական շրջանի, եթե չեմ սխալվում, գլխավոր այգին է՝ Ազատամարտիկներ այգում կա մի շինություն, որի կարգավիճակին ծանոթանալու համար, պարոն քաղաքապետ, դիմեցի Ձեզ:

Ի պատասխան ստացա, որ գրանցամատյանից բացակայում են տվյալները: Փորձեցի ճշտել վարչական շրջանից, բոլոր բաժինները խուսափեցին պատասխանել այդ հարցին: Ասեմ ավելին՝ ոստիկանության հետ կապվելուց տվյալ տարածքի տեսուչը նույնպես խուսափեց պատասխանել հարցին: Հիմա մենք գործ ունենք տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրված կոռուպցիոն մեխանիզմի հետ:

Խնդրում եմ պարոն Գրիգորյանին այսօր ինձ այս դահլիճում պատասխանել՝ Ձեր վարչական շրջանում Ազատամարտիկների այգու շինությունը, որը բավականին մեծ է, ո՞ւմ է պատկանում, ինչպե՞ս է առանց թույլտվության կառուցվել այդ շինությունը և ինչո՞ւ չեք բարձրաձայնում սեփականատիրոջ անունը:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Դավիթ Գրիգորյանը, բայց Ազատամարտիկների պուրակում ի՞նչ շինություն կա: Ազատամարտիկների պուրակը կառուցել ենք մենք 4 տարի առաջ, այնտեղ շինություն չկա:

Անի Խաչատրյան

-Ես նկարներն ուղարկել եմ Ձեզ: Բոլորիս հայտնի «Նոր Արեշ» խայտառակ պոլիկլինիկայի անմիջապես կողքին:

Տարոն Մարգարյան

-Դա այգու տարածքու՞մ է:

Անի Խաչատրյան

-Այո՛, այգու մեջ է:

Դավիթ Գրիգորյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, ես, ճիշտն ասած, չեմ հիշում նման գրություն, որ ուղղարկվել է մեր ավագանու անդամի կողմից շինության վերաբերյալ: Հստակ կարող եմ Ձեզ պատասխանել, որ Էրեբունի վարչական շրջանի Ազատամարտիկների այգում կա մի կիսակառույց շինություն՝ Ձեր մատնանշած պոլիկլինիկայի հարևանությամբ, դա եկեղեցու հիմքն է, որը 2009թ. սկսվել է կառուցապատվել, հետո, հովանավորի մահվան պատճառով, դադրել է աշխատանքը, դա կիսակառույց է, Էրեբունու եկեղեցու շինության մասին է խոսքը:

Անի Խաչատրյան

-Պարոն Գրիգորյան, հասարակական զուգարան կա տարածքում, որի անմիջապես կողքն է, իհարկե զուգարանն էլ բանալիով փակված է: Բավականին մեծ շինություն է, տարածքի բնակիչների պնդմամբ սեփական տուն է, եկեղեցին հաստատ չեմ խառնել սեփական տան հետ: Բացարձակ կապ չունի եկեղեցու հետ:

Տարոն Մարգարյան

-Ես Ազատամարտիկների այգին տարին երկու, երեք անգամ այցելում եմ, այնտեղ շինություն չկա: Միգուցե Ազատամարտիկների այգու հարակից տարածքում է, այգու ներսում շինություն չկա:

Անի Խաչատրյան

- Ո՛չ, մեծ մասը այգու մեջ է, բնակելի տուն է, ես Ձեզ նկարներն ուղարկել եմ, դուք չե՞ք նայում մեր դիմումները պարոն քաղաքապետ:

Տարոն Մարգարյան

-Դուք այգու սահմանները վերցրեք նայեք:

Անի Խաչատրյան

-Լրիվ սահմաններով է, ես նկարել, ուղարկել եմ Ձեզ:

Տարոն Մարգարյան

-Լավ, մենք կուսումնասիրենք, Ձեզ կտեղեկացնենք:

Ինձ համար էլ է հարցական, քանի որ այդ այգին կառուցվել է իմ նախաձեռնությամբ և ես տարին մի քանի անգամ այցելում եմ՝ տեսնելու ինչ վիճակ է տիրում: Ամեն այցի ժամանակ, տեսնում եմ այգում նորմալ, բարեկարգ, մաքուր վիճակ: Եթե այնտեղ շինություն կառուցվեր, հաստատ նկատելի կլիներ:

Այգու ներսում կար սեփական տարածք, որտեղ թույլ չտվեցինք շինարարություն իրականացնել, մտածում էինք այդ տարածքը փոխանակել այլ վայրի հետ: Դեռ երեք տարի առաջ Երևանի ավագանու անդամներին և Էրեբունի վարչական շրջանի բնակիչներին խոստացա, որ այնտեղ շինարարության թույլտվություն չենք տալու:

Տիկի՛ն Բախշյան, հիշում եք երևի:

Անահիտ Բախշյան

-Այո՛, իհարկե հիշում եմ, ում առաջարկով Ազատամարտիկների այգու այդ 1000 քմ տարածքը բերեցինք այգի՝ բնակիչներին: Դուք էլ համապատասխան հող տվեցիք ուրիշ տեղ. չգիտեմ տվեցիք, թե ոչ, բայց այդ մարդուց վերցրեցիք:

Տարոն Մարգարյան

-Կարևորն այն է, որ այդ տարածքը հիմա այգուն է ծառայում: Մենք անպայման բարձրացված խնդիրը կուսումնասիրենք և Ձեզ կտեղեկացնենք:

Անի Խաչատրյան

-Ես երկրորդ հարց էլ ունեմ:

Տարոն Մարգարյան

-Խնդրե՛մ:

Անի Խաչատրյան

-Պարո՛ն քաղաքապետ, տիկի՛ն Ստեփանյան, պատասխանեք խնդրեմ, մինչ տիկին Բախշյանի հարցումը Պուշկինի անվան հ. 8 դպրոցի վերաբերյալ, տեղյակ էիք արդյոք, որ դպրոցի տարրական դասարանների օտար լեզվի դասաժամերը չէին կիսվում, կիսումը ֆիկտիվ բնույթ էր կրում, ուսուցիչներն էին բաժանվում երկու մասի, օրը միջով իրենք իրենց մեջ բաժանած գալիս էին:

Տիկին Բախշյանի հարցումից հետո, իհարկե, վերացավ խնդիրը, սակայն, եթե տեղյակ չեք եղել խնդրին, այդ դեպքում կխնդրեմ հարցիս պատասխանի նաև պարոն Զավեն Առաքելյանը, թե ինչու հարցին դեռ երեք տարի առաջ լուծում չի տրվել. որովհետև հենց իր որդու դասարանը նույն մեթոդով է դասավանդվել:

Ասեմ ավելին, պարոն Առաքելյան, ինչո՞ւ հարցին լուծում չեք տվել, նաև այս ուսումնական տարում Ձեր որդու դասարանը երկու ամիս շարունակ չի ունեցել մայրենի լեզվի ուսուցչուհի՝ ուսուցչուհու հիվանդության պատճառով, որը մահացավ: Դասարանը չի ունեցել փոխարինող ուսուցչուհի, այլ դասարան է մտել օրը մի ուսուցչուհի, նույնիսկ օնլայն գրանցամատյանում դեռ հանգուցյալ ուսուցչուհու տվյալներն են: Ծնողները ստիպված են երեխաներին երկու ամսվա ուսուցման բացակայության պատճառով մասնավոր պարապմունքների տալ:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

Զավեն Առաքելյան

-Շնորհակալությու՛ն, նման բան չկա: Իմ որդին հայերենի դասաժամերին մասնակցել է և ստացել է համապատասխան գնահատական:

Անի Խաչատրյան

-Խոստանում եմ դասարանի ծնողներին բերել, իմ քրոջ աղջիկը նույնպես սովորում է Ձեր որդու դասարանում, որտեղից ունեմ ամբողջ տեղեկատվությունը: Նայեք օնլայն գրանցամատյանում և կտեսնեք հայերենի գնահատականի բացակայությունը բացառապես:

Տարոն Մարգարյան

-Պարոն Առաքելյանը նշեց, որ իր որդին հաճախում է դպրոց, հայոց լեզվի դասերին մասնակցում է և նման բան չկա:

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Ալեն Սիմոնյան, խնդրե՛մ:

Ալեն Սիմոնյան

-Պարո՛ն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, ես միանգամից երկու հարց ունեմ: Նախ՝ ուզում եմ խոսել օրենքի հետ կապված, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ, լռությունը խախտելու մասին օրենքի և ծխախոտի իրացման, սպառման, օգտագործման սահմանափակումների մասին օրենքի:

Մենք գիտենք, որ Երևան քաղաքում ժամը 23.00-ից հետո հրավառություններն արգելված են, բայց դրանք, այնուամենայնիվ, տեղի են ունենում, ինչպես նաև ակնհայտ է, որ հասարակական տրանսպորտում վարորդները, այնուամենայնիվ, շարունակում են ծխախոտ օգտագործել:

Ի՞նչ լուծումներ եք տեսնում այս խնդրի դեմ պայքարի հարցում: Ուզում եմ նաև նշել, որ «ԵԼՔ» խմբակցությունը հանդես է եկել առաջարկով՝ լռությունն առաջին անգամ խախտելու համար տուգանքը հասցնել 1 միլիոն ՀՀ դրամի, երկրորդ անգամ՝ 2 միլիոն ՀՀ դրամի: Կցանկանայի իմանալ Ձեր կարծիքը սրա հետ կապված, թե ինչպե՞ս ենք մենք արձանագրելու այս խախտումները, ինչպե՞ս ենք տուգանելու այս իրավախախտողներին: Ինչո՞ւ մինչ օրս սա չի արվում պատշաճ կերպով և խնդիրն առկա է:

Երկրորդ հարցս վերաբերում է համաքաղաքային երեք խնդիրներին, որոնք քաղաքացիների կողմից ուղարկվել է ինձ, դա աղբատար շենքերն են, անցումներն են և ապօրինի շինություններն են, որոնցից մի մասը գույքահարկ է վճարում, այսինքն՝ գույքահարկը վերցվում է, բայց շինությունները, այնուամենայինիվ, չեն օրինականացվում:

Ինչպե՞ս ենք լուծելու աղբատար շենքերի, որոնք որ առնետների, խավարասերների և մնացած բնական երևույթների հետևանքն է տալիս և անցումների, որոնք հանրային զուգարանների են վերածված: Մեկը՝ «Սբ. Սարգիս» եկեղեցու կողքի, հենց մեր հարևանությամբ գտնվող մեծ անցումն է, ինչպես նաև Մաշտոցի պողոտայի անցումը, շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Դուք գիտեք, որ կառավարություն նախագիծ պետք է ներկայացնեինք՝ ձայնի բարձրությունը և հրավառությունների իրականացումը կանոնակարգելու ուղղությամբ: Նյութը տրամադրվել էր ավագանու խմբակցություններին՝ քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու համար: «ԵԼՔ» խմբակցությունից ստացել ենք առաջարկություն վարչական իրավախախտումների վերաբերյալ: «Հանրապետական կուսակցություն» խմբակցության կողմից տուգանքների հետ կապված եղել էր այլ առաջարկ, իսկ «ԵԼՔ» խմբակցությունը ներկայացրել էր, թվերը հնչեցրիք, մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ: Մենք այդ առաջարկությունն ընդունել ենք և ուղարկել համապատասխան գերատեսչություններին, որպեսզի նրանց կողմից եզրակացությունները ստանալուց հետո կառավարությանը ներկայացնենք այդ հարցը:

Ինչ վերաբերում է հասարակական տրանսպորտում վարորդների կողմից ծխախոտ օգտագործելուն, աշխատակազմի տրանսպորտի վարչության ոլորտի պատասխանատուն ճանապարհային ոստիկանության հետ միասին այդ ուղղությամբ իրականացնում են ամենօրյա աշխատանք:

Տրանսպորտի բարեփոխումների գործընթացն ավարտելուց հետո կլինենք ավելի խիստ, հետևողական, նաև վարչական տույժերի առումով: Համոզված եմ այն ժամանակ սպասարկման որակն այլ կլինի և ոչ մի վարորդ չի համարձակվի տրանսպորտի կամ ավտոմեքենայի մեջ ծխախոտ օգտագործել:

Դուք գիտեք, որ այսօր օրենքը թույլ է տալիս, որ որոշ մարդիկ իրենց սեփական ավտոմեքենաներով սպասարկեն որոշ երթուղիներ: Դժվար է լինում արգելել ծխատոտ օգտագործել սեփական ավտոմեքենայի մեջ, բայց, միևնույն ժամանակ, օրենքը թույլ է տալիս վարչական տույժերի ենթարկել կարգը խախտողներին:

Ինչ վերաբերում է երկրորդ հացին, կապված ավտոտնակների ապօրինության հետ, այն ավտոտնակները, որոնք սեփական են, բնականաբար, պետք է գույքահարկ, հողի հարկ վճարեն, իսկ այն ավտոտնակները, որոնք սեփական չեն, աղբահանության և սպասարկման վարձ են վճարում, մինչև ավտոտնակների ճակատագիրը վերջնական որոշվի՝ սեփականաշնորհվելու են, թե ապամոնտաժվելու են:

Մյուս հարցի հետ կապված՝ «Սանիթեք» ընկերությունը փորձնական մի քանի շենքում աղբի խցերը փակել է և շենքի հարակից տարածքում աղբամաններ է տեղադրել: Դա, բնականաբար, ցանկալի է իրականացնել ամբողջ Երևան քաղաքում, բայց պետք է համոզվել, արդյոք «Սանիթեք» ընկերությունն իր այսօրվա հնարավորություններով պատրաստ է ըստ գրաֆիկի ամբողջ աղբահանությունն իրականացնել:

Դրանով մենք կարողանում ենք լուծել բազմաբնակարան շենքերի, թե՛ սանիտարական վիճակը, թե՛ ընդհանրապես այն խնդիրները, որոնք ամռան շոգին առաջանում էին բազմաբնակարան շենքերում: Առաջարկը ներկայացվել է «Սանիթեք» ընկերությանը, ընկերությունը բազմաբնակարան մի քանի տասնյակ շենքերում, գրեթե բոլոր վարչական շրջաններում, այդ աշխատանքը փորձնական իրականացրել է, և գործընթացը շարունակական է լինելու:

Ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ հարցի նման լուծմանը բազմաբանկարան շենքերի մինչև հինգերորդ հարկի բնակիչները համաձայն են, հինգերորդ հարկից բարձր ապրող բնակիչները համաձայն չեն: Մեր կողմից էլ ցանկալի է, որ բազմաբնակարան շենքերի այդ բունկերները փակվեն և հարակից վայրեում տեղադրվեն աղբամաններ:

Ինչ վերաբերում է Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցման խնդրին, գիտեք, դա սեփականություն է, հիմա սեփականատիրոջ հետ բանակցում ենք, ներդրումային ծրագիր իրականացնելու համար: Արդեն հասել ենք մի փուլին, որ փաստաթղթային տեսքի ենք բերում, կազմվում է հստակ ժամանակացույց, որը կներկայացնենք հանրությանը:

Ալեն Սիմոնյան

-Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Խնդրեմ:

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրե՛մ:

Թեհմինա Վարդանյան

-Պարո՛ն քաղաքապետ, հարցս մասնավորապես ուղղում եմ Ձեզ: Հայտնի է, որ Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի վերանորոգման, պահպանման խնդիրը քաղաքի կարևորագույն խնդիրներից է, քանի որ բնակֆոնդը բավականին հին է և հաճախ կիսասարք վերելակների, շենքերի վիճակի պատճառով առնչվում ենք անվտանգության խնդիրների հետ, որոնք երբեմն ունենում են նույնիսկ ողբերգական ավարտ:

Երևանի բյուջեից, այնուամենայնիվ, որոշ հատկացումներ իրականացվում են պահպանման և վերանորոգման համար: Ընդորում, հաշվի առնելով գումարների բավականին

փոքր լինելը, արդյունավետության խնդիրը դառնում է ավելի արդիական։ Փաստացի ծախսերի չարաշահումների մասը չքննարկելով հանդերձ, ուզում եմ անդրադառնալ ծախսերի բաշխմանն ըստ համայնքների։

Եվ այսպես. Աջափնյակ վարչական շրջանում, որտեղ առկա է 431 շենք 1.5մլն մ² բնակելի տարածքով, վերջին երկու տարվա կտրվածքով ծախսվել է միջին տարեկան 30 մլն. դրամ, ընդորում՝ շենքերի 80%-ը կառուցվել է մինչև 1980թ.։

Արաբկիր վարչական շրջանում հատկացվել է տարեկան միջին 10 մլն դրամ, որտեղ կա 2.2մլն. մ² բնակելի տարածքով 681 շենք, որոնց 85 %-ը կառուցվել է կրկին մինչև 1980թ.։

Նմանատիպ պատկեր է նաև 2.2մլն. մ² բնակելի տարածքով Նոր Նորքում, որտեղ կա 666 բազմաբնակարան շենք, որտեղ շենքերի 70%-ը կառուցվել է կրկին մինչև 1980թ.։ Այստեղ հատկացվել է տարեկան միջինը 5 մլն դրամ, իսկ ահա այս վարչական շրջանների համեմատ, զգալի ավելի նոր շենքեր ունեցող Ավան վարչական շրջանում ծախսվել է միջին տարեկան 60մլն դրամ, 257 շենքի համար ընդամենը, որը ընդհանուր հաշվով ունի 800.000 մ² բնակելի տարածք և որի ընդամենը 40%-ն է կառուցված մինչև 1980թ.։

Արդյունքում 2-3 անգամ քիչ շենքեր և բնակելի տարածք ունեցող, զգալիորեն ավելի նոր կառուցված՝ և՛ պահպանման, և՛ վերանորոգման կարիք քիչ ունեցող շենքերով Ավան վարչական շրջանում ծախսվում է չորս անգամ ավել գումար, այսինքն 1մ² բնակելի տարածքի հաշվարկով Ավանում, մյուս վարչական շրջանների համեմատ, ծախսվում է 10 անգամ ավել գումար, իսկ շենքերի վիճակը հաշվի առնելով՝ մոտ 20 անգամ։

Խնդրում եմ պարզաբանել, պարոն քաղաքապետ, ինչո՞վ է պայմանավորված նման ակնհայտ տարբերակված և կողմնակալ մոտեցումը, շնորհակալ եմ։

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, ես կպատասխանեմ Ձեր հարցին։

Դեռ 2 տարի առաջ «Բարև Երևան» խմբակցությունն էլ նույն հարցը բարձրացրեց։

Ուզում ենք տեղեկացնել. բոլոր վարչական շրջաններում համատիրություններին աջակցություն տրամադրվում է հավասարաչափ՝ թե՛ վերելակների կառուցման, վերականգնման, թե՛ շքամուտքերի վերանորոգման համար, ուղղակի հոդվածների խնդիր կա այստեղ։ Ավան վարչական շրջանին մի հոդվածով է այդ ամբողջը տրամադրվում, մյուս վարչական շրջաններում տարբեր հոդվածներով։

Դուք վերցնում եք ընդամենը մեկ հոդվածը, եթե վերցնեք բոլոր հոդվածները և մեր ֆինանսական բլոկի հետ ուսումնասիրեք, կտեսնեք համաչափությունը։

Ինչ վերաբերում է վերանորոգման հարցին. Դուք գիտեք, որ վերջին 2-3 տարվա ընթացքում թե՛ համատիրությունների, թե՛ վարչական շրջանների կողմից, համայնքի

աջակցությամբ, բազմաբնակարան շենքերի շքամուտքերն առաջին հարկից մինչև վերջին հարկերը վերանորոգվում են: Մեր առջև խնդիր ենք դրել, որ հնգամյա ծրագրով, բազմաբնակարան շենքերի վերանորոգումն ամբողջությամբ ավարտենք: Բնակֆոնդի պահպանման ուղղությամբ ահռելի մեծ գումարներ են հատկացվում թե՛ վարչական շրջանների, թե՛ համատիրությունների կողմից:

Ուզում եմ հստակ իմանանք, որ այն վարչական շրջաններում, որտեղ բազմաբնակարան շենքեր կան հավասարաչափ բաշխված են թե՛ վերելակների, թե՛ շքամուտքերի վերանորոգման աշխատանքները, ուղղակի առանձին տողերով և առանձին հոդվածներով, առանձին խողովակներով են դրանք տրամադրվում:

Վերելակների խնդրի հետ կապված՝ պայմանավորվածություն ունենք ստանալու մասնագիտական խորհրդատվություն, որից հետո կկարողանանք այդ տնտեսությունը կառավարել և հստակ իմանալ մեր հաջորդ քայլերը, թե ինչքան ժամանակում վերելակային տնտեսությունն ամբողջությամբ կփոխվի և սպասարկումը կհամապատասխանի միջազգային չափորոշիչներին:

«Համատիրությունների մասին» օրենքի փոփոխության առումով լուրջ աշխատանք է տարվում: Կառավարության կողմից ստեղծվել է աշխատանքային խումբ, որտեղ ներգրավված են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, քանի որ Հայաստանում ամենաշատ համատիրություններն ունի Երևան համայնքը: Այդ փորձն ու առաջարկություններն առաջին հերթին Երևան համայնքին են անհրաժեշտ, որպեսզի համատիրությունները արդյունավետ գործեն:

Թեհմինա Վարդանյան

-Պարո՛ն քաղաքապետ ես պաշտոնական կայքից դուրս եմ բերել այս տվյալները, կարող եմ Ձեզ էլ տրամադրել, գուցե չեք նայել: Երևանի պաշտոնական կայքը նույնպես ուսումնասիրել եմ՝ տարեկան հաշվետվությունները բոլոր վարչական շրջանների:

Նույն պատկերն է և՛ առողջապահական ոլորտում, և՛ սոցիալական ոլորտում, և՛ խաղահրապարակների կառուցման հետ կապված, այսինքն՝ կոնկրետ խտրականություն կա: Ինչու Ավանում 70 հիվանդի տրամադրվում է անվճար ուղեգիր, Արաբկիրում տրամադրվում է 5 հիվանդի: Այսինքն Ավանն ունի՞ այդքան բյուջե: Ինչո՞վ է պայմանավորված Ավանի բյուջեի այդքան մեծ լինելը, այդքան հնարավորություններ ու արտոնություններ տալը:

Տարոն Մարգարյան

-Ավան վարչական շրջանը և մյուս վարչական շրջաններն ուղեգրերի հետ ընդհանրապես կապ չունեն: Սա գոնե հստակ իմացեք, դրա համար ուզում եմ, որ տիրապետեք ամբողջ տեղեկատվությանը, որպեսզի կարողանաք ամեն ինչը պատկերացնել,

նույնը վերաբերում է համաչափ զարգացմանը: Երբ դուք հնգամյա ծրագրի մեջ ասում եք, որ վարչական շրջաններում նույն ձև գրված են, ուղղակի թվերն են փոփոխված իրանց մեծությամբ և փոքրությամբ, այ դա է համաչափ զարգացումը, ինչ չափերով ներկայացված, նույն ձևի 12 վարչական շրջաններում:

Ինչ վերաբերում է առողջապահական ոլորտին, վարչական շրջանները բժշկական հաստատությունների բյուջե չունեն: Վերցրեք բյուջեն հստակ նայեք, ուսումնասիրեք և տիրապետեք այդ ամենին:

Թեհմինա Վարդանյան

-Ենթադրում եմ, որ դա տրամադրվում է քաղաքապետարանի կողմից:

Տարոն Մարգարյան

-Կարող է նաև առողջապահության նախարարության կողմից դա լինել: Երբ որ ընդհանուր պետական համակարգին էլ տիրապետեք, այս հարցերը չեք տա:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Տիգրան Ավինյան, խնդրե՛մ:

Տիգրան Ավինյան

-Պարո՛ն Մարգարյան, երեկ ես մասնակցել եմ թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման բաց մրցույթի հանձնաժողովի նիստին և մինչև բուն թեմային անդրադառնալը ես կուզենայի ընդհանուր իմ փորձով Ձեզ հետ կիսվել:

Մոտավորապես ժամը 3-ից 10 պակաս հանձնաժողովի բոլոր անդամներն արդեն ներկա էին և նիստը սկսվելուց 3 րոպե առաջ իմ առջև դրվեց 15 էջանոց մի փաթեթ, որը փաստացի 15 էջանոց չէր 60 էջանոց էր, որովհետև ամեն էջին 4 A4 ֆորմատի տպագիր կար, այսինքն 60 էջանոց փաթեթ: Փաստացի ես փաթեթին ծանոթ չէի և առաջարկվեց այդ փաթեթին կողմ քվեարկել: Ես առհասարակ այս առաջին հարցով կցանկանայի հստակեցնել Ձեր մոտեցումը, Հանրապետական կուսակցության մոտեցումը նման համագործակցության հետ կապված և արդյոք Դուք համարում եք, որ նման տիպի համագործակցությունը որևէ կերպ կարող է արդյունավետ լինել:

Տարոն Մարգարյան

-Հանրապետական կուսակցությունը չի համագործակցում իրենց հետ: Դա քաղաքապետարանի համապատասխան վարչությունները և մասնագետներն են համագործակցում, դա աշխատակազմ է, որը մրցույթ է հայտարարում: Ստեղծել է հանձնաժողով, հանձնաժողովում այդ հասարակական կազմակերպություններն իրենց

առաջարկություններն են ներկայացնում և դրանով ստեղծվում է փաթեթ և փաթեթը ներկայացվում է մրցույթի, ովքեր կցանկանան թող մասնակցեն, ովքեր պատրաստ են մասնակցելու։

Տիգրան Ավինյան

-Լավ անցնեմ առաջ պարոն Մարգարյան, իմ հարցը դրան չէր վերաբերում։ Հարցը նրա մասին էր, որ ես այդ 60 էջանոց փաթեթը ստանում եմ նիստից 3 րոպե առաջ և ենթադրվում է, որ ես այդ փաթեթին պետք է արդեն իսկ ծանոթ լինեի, որպեսզի կարողանայի կողմ կամ դեմ արտահայտվել այս փաթեթին։ Սա զուտ տեխնիկական մասով է, բայց հիմա սա չէ կարևորը, անցնեմ բուն թեմային։

Այդ փաթեթում կա տեխնիկական բնութագիր՝ թափառող կենդանիների վնասազերծման հետ կապված։ Փաստացի քաղաքապետարանը որոշակի քաղաքականություն է առաջ քաշել թափառող կենդանիների ստերջացման քանակները նվազեցնելու և վնասազերծման, այսինքն քնեցման՝ կամ այլ մեթոդներով շներին սատկեցնելու քաղաքականություն է որդեգրել։

2016թ. պայմանագրի համաձայն՝ կոնկրետ պետք է ստերջացվեր 3938 շուն, այսինքն՝ մոտ 4000 և 10025 շուն պետք է վնասազերծվեր։ Այս տարվա պայմանագրով, արդեն իսկ նախատեսվում է կրկնակի կրճատել ստերջացվող շների քանակը, այսինքն՝ 4000-ի փոխարեն 2107 շուն ստերջացվի և ավելացվում է վնասազերծվող շների քանակը և հասցվում է 12500-ի։

Հարցը հետևյալն է. Երևանում կան շատ տարբեր խմբեր, կենդանիների պաշտպանության խմբեր և տասնյակ հազարավոր մարդիկ մեր համաքաղաքացիներն այդ խմբերի անդամներ են՝ դրանք ֆեյսբուքյան խմբեր են, հասարակական կազմակերպություններ են, որոնք շարունակաբար բարձրաձայնել են, և՛ քաղաքապետարանի այս քաղաքականությանն են դեմ եղել, և՛ «Յունիգրաֆ-Իքս» ընկերության վարած գործունեության ձևին են դեմ եղել։

Փաստացի ուզում եմ նախ արձանագրել, որ այստեղ քաղաքապետարանի քաղաքականություն կա հստակ, որը պատվեր է տալիս ավելի շատ շուն վնասազերծել և ավելի քիչ շուն ստերջացնել։ Այստեղ ամենակարևոր հարցը, որը վերաբերում է հենց «Յունիգրաֆ-Իքս» ընկերությանը, փաթեթը ուսումնասիրելով հասկանալի է դառնում, որ այն ուղղակի կարված է «Յունիգրաֆ-Իքս» ընկերության համար, այսինքն՝ փաստացի ոչ մի ուրիշ ընկերություն հնարավորություն չունի այս բաց մրցույթին մասնակցել։ Ես ուզում եմ ուղղակի հասկանալ ինչումն է պատճառը, ինչու՞ մենք չենք ստեղծում մրցակցային դաշտ, ինչու՞ մենք չենք տալիս հնարավորություն այլ ընկերությունների։

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը, խնդրե՛մ։

Դավիթ Օհանյան

-Շնորհակալություն հարցի համար, իհարկե մենք շատ երկար տարիներ ենք ուսումնասիրել, տարբեր քաղաքների փորձն ենք ուսումնասիրել և նույն Ձեր կողմից թվարկած հասարակական կազմակերպությունների հետ բազում քննարկումներ ենք ունեցել։

Մեզ մոտ մրցույթը բաց է, էլեկտրոնային տարբերակով է և երբ հարցը հասնում է այնտեղ, որ մենք այդ նույն կազմակերպություններին առաջարկում ենք, որ իրենք էլ բերեն ներգրավեն, մրցույթի մասնակից տարբեր կազմակերպություններ, ըստ էության չկան։

Այն կազմակերպությունը, որ այսօր զբաղվում է թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներով, մենք հետևողական ենք այդ ընկերության աշխատանքների նկատմամբ։ Այն խնդիրը, որը դուք բարձրացնում եք, թե ինչու՞ է պակասեցվել ստերիլիզացումը և ավելացվել քնեցման տարբերակով վնասազերծման աշխատանքները, ես դրան էլ պատասխանեմ։ Այդ նույն կենդանասերներին և հասարակական կազմակերպություններին, երբ մենք առաջարկում ենք, որ այնտեղ տեղափոխված շների համար իրենք գտնեն խնամակալներ, գիտեք որ տեղափոխված շները պահվում են, ըստ էության ոչ մի կազմակերպություն չի մասնակցում։

Այսօր այո և՛ ֆինանսական առումով, և՛ օգտագործման օգտակարության առումով քնեցման տարբերակով ավելի արդյունավետ է աշխատանքները կազմակերպվում, քան ստերիլիզացման ճանապարհով։

Տիգրան Ավինյան

-Լավ, անկեղծ ասած իմ համար դեռևս մեկ է պարզ չի, թե ինչու է հենց, տեսեք փաթեթում հստակ նախապայմաններ կան, որոնք հստակ թույլ են տալիս, միայն զուտ փորձը հաշվի առնելով, այսինքն՝ փաթեթում կա փորձ գաղափար, այս ոլորտում կազմակերպությունը պետք է ունենա փորձ։ «Յունիգրաֆ» ընկերությունից բացի, Երևան քաղաքում ոչ մի ուրիշ կազմակերպություն նման պայմանագրեր չի իրականացրել, այսինքն, եթե մենք այս նախապայմանը դնում ենք, մենք ի սկզբանե բոլորին հանում ենք, ֆիլտր ենք անում, մնում է «Յունիգրաֆ» ընկերությունը։

Դավիթ Օհանյան

-Մրցույթին կարող են մասնակցել նաև միջազգային կազմակերպություններ և ամենակարևորն օրենքի պահանջ է, որ նրանք ունենան կացարան։ Այսօր Երևան քաղաքում և ընդհանրապես հանրապետությունում չկա նման կազմակերպություն։

Տարոն Մարգարյան

-Մենք առարկություններ չունենք, որ միջազգային կառույցներն ու կազմակերպությունները նույնպես մասնակցեն այդ մրցույթին: Պաշտոնապես հայտարարում եմ, որ պատրաստ ենք ամեն ինչով աջակցել:

Ավագանու խմբակցություններն էլ նույնպես կարող են նայել. ինչ միջազգային կազմակերպություններ կան, որ կարող են գալ այստեղ իրականացնել այդ աշխատանքները, մենք պատրաստ ենք համագործակցելու:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Զարուհի Բաթոյան, խնդրե՛մ:

Զարուհի Բաթոյան

-Շնորհակալություն, երկու հարց ունեմ, առաջին հարցս մասնավորապես վերաբերում է Նոր Նորք վարչական շրջանում գործող կազմակերպություններից մեկին: Ես գիտեմ, որ քաղաքապետարանը լավ փորձ ունի նաև, ի դեմս վարչական շրջանների, տեղերում համագործակցելու տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, ինչը շատ կարևոր է, որովհետև այդ ծառայությունները պետք է պատվիրակել, որպեսզի համայնքներին ավելի մոտ լինեն:

«Նորաստղ» հասարակական կազմակերպությունը, որն արդեն 19 տարի գործում է Նոր Նորք վարչական շրջանում, շատ լավ համագործակցում է վարչական շրջանի հետ, ղեկավարության հետ: Թիվ 118 մանկապարտեզի տարածքի մի մասն է տրամադրվել, որտեղ էլ կազմակերպությունը ծառայություններ է մատուցում մոտ 70 երեխայի, որից 30-ը հաշմանդամություն ունեն: Ամբողջ Նոր Նորքին է սպասարկում, տարբեր խմբակներ կան, տարբեր ծառայություններ կան, չեմ ուզում երկար խոսել այդ մասին, բայց մի լուրջ խնդրի առջև է կանգնում ամեն ձմեռ այս հասարակական կազմակերպությունը:

Ջեռուցումը, որ կենտրոնական է, մանկապարտեզն անջատում է, այսինքն՝ մանկապարտեզին ջեռուցում տրամադրվում է, բայց իրենք ջեռուցում չեն ստանում, որովհետև իրենք նախ չունեն ֆոնդեր, միջազգային կազմակերպություններից ֆինանսավորում չունեն, հիմնական աշխատանքը նաև կամավոր սկզբունքով են իրականացնում ծնողների միջոցով: Վարչական շրջանն ուղղակի չի կարողանում լուծել այդ խնդիրը, որովհետև ասում են, որ միջոցներ չունի, թեև լավ հարաբերությունների մեջ են և այլն:

Հարցս հետևյալն է՝ արդյոք դա մեծ բյուջե է և մեծ գումար է ամեն տարի նաև ջեռուցելու այս հասարակական կազմակերպության տարածքը, որը 70-ից ավելի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների համար է ծառայություններ մատուցում: Եթե չեմ

սխալվում ամսական գուցե առավելագույնը 80000 դրամի մասին է խոսքը: Ես գիտեմ, որ ամեն տարի այս խնդրի առջև են կանգնում, ես ուզում եմ հասկանալ արդյոք դա լուրջ խնդիր է մեր բյուջեի համար և չենք կարող ապահովել այդ աջակցությունը:

Երկրորդ հարցս, որին շատ կուզեի, որ վարչական շրջանի ղեկավարները ուղղակի կարճ պատասխանեին, ուզում եմ թարմացնել իմ տեղեկությունները՝ արդյոք վարչական շրջանների շենքերը, այսինքն՝ այն շենքերը, որտեղ վարչական շրջանի ղեկավարներն են նստում, այնտեղ աշխատում, աշխատակազմն է աշխատում արդյոք այդ բոլոր վարչական շրջանների շենքերը ֆիզիկապես մատչելի՞ են հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Եթե ես, որպես ավագանու անդամ, պլանավորեմ նաև հանդիպումներ տեղերում հաշմանդամություն ունեցող անձանց համար, կկարողանամ արդյոք ինքնուրույն գնալ այդ հանդիպմանը և ունենալ այդ հանդիպումը: Խնդրում եմ ուղղակի կարճ ասել օրինակ՝ Նոր Նորքում՝ այո, Ավանում՝ ոչ և այլն:

Ես որևէ մեկի օգնության, պատրաստակամության վրա չեմ կասկածում, խնդրում եմ, այսինքն գիտեմ, որ դուք, եթե նույնիսկ դժվարություններ լինեն կօգնեք, բայց հարցս հետևյալն է, արդյոք ինքնուրույն կարող եմ մտնել վարչական շրջանի շենքը, հանդիպում ունենալ բնակիչների հետ, շնորհակալ եմ:

Տարոն Մարգարյան

-Շատ բարի, 12 վարչական շրջանների ղեկավարներն այո կամ ոչ չեն ասելու, իրենց փոխարեն կպատասխանեմ ես: Վարչական շրջանների աշխատակազմերի շենքերը կառուցվել են դեռ խորհրդային տարիներին և այն ժամանակ, դուք լավ գիտեք, չէին նախատեսվում նման պայմաններ, բայց մեր կողմից վերջին 4 տարվա ընթացքում եղավ հանձնարարական, որ վարչական շրջանների շենքերում լուծվի այդ հարցը:

12 վարչական շրջաններում դա իրականացրեցին, նույնիսկ հնարավորություն տվեցին, որ առաջին հարկերում, անհրաժեշտության դեպքում, հանդիպումներ կազմակերպվեն: Կարող եք այցելել վարչական շրջաններ և տեսնել, որ խնդիրը լուծված է:

Ինչ վերաբերում է Նոր Նորք վարչական շրջանում գործող հասարակական կազմակերպությանը, մենք բազմաթիվ հասարակական կազմակերպություններ ունենք, որոնք մեր համայնքի սեփականության տարածքներում են իրենց գործունեությունը ծավալում: Բոլորն էլ վճարում են ջեռուցման, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի և այլ գումարներ: Այլ խնդիր է, եթե կազմակերպությունն առանձին խնդրում է և վարչական շրջանն աջակցում է: Բյուջեով նախատեսված չեն նման գումարներ:

Զարուհի Բաթոյան

-Բյուջեում նախատեսված չկա՞ն պահուստային ֆոնդեր և այլն:

Տարոն Մարգարյան

- Ո՛չ, բյուջեով չի նախատեսվում։

Զարուհի Բաթոյան

-Այսինքն՝ դա զուտ վարչական շրջանի հայեցողությանն է մնում, եթե կկարողանան ապա կտրամադրե՞ն։

Տարոն Մարգարյան

-Այո, քանի որ Երևան քաղաքում շատ հասարակական կազմակերպություններ կան, եթե մենք բյուջեով նախատեսենք, ապա բոլորին պետք է տրամադրենք։

Զարուհի Բաթոյան

-Հասկանալի է, բայց հիմա, եթե օրինակ տվյալ կազմակերպությունը դիմում-խնդրանքով դիմում է նման դեպքում, ունենք արդյոք նման հնարավորություն աջակցելու այդ կազմակերպությանը։

Ասեմ խնդիրը որն է պարոն Մարգարյան, պարզապես վարչական շրջանի ղեկավարների, այսպես ասած, բյուջեն բավականին սահմանափակ է և իրենք շատ հաճախ այդ ազատությունը և այդ հնարավորությունները չունեն։ Հավանաբար ավելի շատ քաղաքապետարանից է կախված և այդ պատճառով եմ ես այդ հարցն այստեղ տալիս։

Տարոն Մարգարյան

-Ես այդ կարծիքին չեմ։

Զարուհի Բաթոյան

-Լա՛վ, շնորհակալ եմ և 12 վարչական շրջանների մատչելիության համար Դուք միանշանակ ասում եք այո՞։

Տարոն Մարգարյան

-Կարող եք այցելել, տեսնել։

Զարուհի Բաթոյան

-Լա՛վ, շնորհակալություն։

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Էդուարդ Աղաջանյան, խնդրե՛մ։

Էդուարդ Աղաջանյան

-Շնորհակալություն, պարոն Մարգարյան ես ունեմ երկու հարց, որոնք վերաբերում են նույն խնդրին։ Հարցս վերաբերում է Երևանում գտնվող, այսպես կոչված, գիշերային ակումբների մի յուրահատուկ տեսակի գործունեությանը։ Այս տեսակին են դասվում օրինակ՝ Խանջյան փողոցի վրա գտնվող բազմաթիվ հաստատություններ, որոնց գործունեության կասեցման հետ կապված իմ գործընկերներ Արայիկ Հարությունյանն ու Անի Սամսոնյանը

Ձեզ դիմումներ են ներկայացրել՝ հիմք ընդունելով բնակիչների բողոքները, որոնք կապված են խրոնիկ և մշտական խնդիրների հետ: Երևանում գտնվող նմանատիպ ոչ բոլոր հաստատություններն են սակայն, որ գտնվում են անմիջապես բնակելի շենքերի հարևանությամբ, և դրանց գործունեությունը ևս պետք է օրենքով կարգավորվի:

Մինչև բուն հարցը հնչեցնելը, կցանկանայի արտահայտել վերաբերմունքս Երևանում գտնվող բոլոր նմանատիպ հաստատությունների վերաբերյալ:

Ես կարծում եմ, որ նախ և առաջ, դրանց գրոտեսկային տեսքը շատ լուրջ վնաս է հասցնում Երևան քաղաքին՝ էսթետիկ տեսանկյունից:

Երկրորդը, իմ գնահատմամբ, դրանք ոչ պակաս վտանգավոր են երիտասարդ սերնդի համար, քան օրինակ՝ խաղատները, որոնք իրավացիորեն հանվեցին Երևանից, քանի որ դրանց զգալի մասը «բար», «կարաոկե», «դիսկո ակումբ» անվան քողի տակ, ըստ էության, հիշեցնում են հասարակաց տներ:

Եվ վերջապես երրորդը՝ այս դասին պատկանող հաստատություններից գրեթե բոլորը հանդիսանում են հասարակական կարգի խախտման մշտական օջախներ:

Եվ այսպես, հարցս կմասնավորեցնեմ կոնկրետ Երևանի կենտրոնում գտնվող մի նմանատիպ հաստատության օրինակով. Տերյան 105/1 հասցեում գտնվում է «18+ կարաոկե դիսկո» անվանմամբ մի հաստատություն: Այն «Ցիտադել» բիզնես-կենտրոնի շենքում է, որն ի դեպ գտնվում է երեք ուսումնական հաստատությունների անմիջական հարևանությամբ:

Ով երբևէ ուշ ժամի անցել է դրա կողքով՝ կփաստի տվյալ հաստատության դիմաց տեղի ունեցող բառիս բուն և փոխաբերական իմաստով փնթի մթնոլորտը, որը ձևավորվում է նրանց աշխատողուհիների արտաքին տեսքից, միմյանց հետ շփման ոճից և մշտական հայհոյախառն բառապաշարից: Էսթետիկայի տեսանկյունից այս ամենը բնավ պատիվ չի բերում մեր քաղաքին, սակայն, բացի այս ակումբի պատճառած էսթետիկ վնասը մեր քաղաքին, այն, այո՛, իրականում հանդիսանում է հասարակական կարգի խախտման մշտական օջախ, որում և որի դիմաց տեղի ունեցած միջադեպերի հետ կապված արդեն իսկ հարուցվել է թվով 11 քրեական գործ, որոնք պարունակում են խուլիգանության, խմբակային ծեծի, մարդու առողջությանը դիտավորյալ ծանր վնասվածք հասցնելու հատկանիշներ:

Ինքս գործի բերումով հաճախ անցնում եմ այդ հաստատության կողքով և անձամբ ականատես եմ եղել այդ վայրենություններին և ծեծուջարդին: Հաշվի առնելով այս միջադեպերի հաճախականությունը՝ 11 քրեական գործը բավականին փոքր թիվ է:

Եվ այսպես, հարցս հետևյալն է. առաջինը՝ քանի՞ քրեական գործ ևս պետք է հարուցվի տվյալ հաստատությունում տեղի ունեցող միջադեպերի առթիվ, քանի՞ մարդ պետք է ֆիզիկապես տուժի, կամ ի՞նչ աստիճանի մարմնական վնասվածք պետք է որևէ մեկին

հասցվի, որպեսզի քաղաքապետարանը միջոցներ ձեռնարկի այս հաստատության գործունեությունը կասեցնելու ուղղությամբ:

Երկրորդը՝ ինչ մեխանիզմներ են գործում քաղաքապետարան-ոստիկանություն հետադարձ կապի տեսանկյունից և անմիջական հարևանների բացակայության պայմաններում, եթե ոչ ոստիկանությունը, ապա ո՞րն է հանդիսանում քաղաքապետարանին նման դեպքերի մասին ահազանգող մարմինը, շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Իմ կարծիքով Դուք լավ տիրապետում եք և լավ տեղյակ եք, որ մենք նախաձեռնել ենք օրենսդրական փոփոխություն կատարել բազմաբնակարան շենքերի, կրթական, մշակութային օջախների հետ կապված:

Էդուրադ Աղաջանյան

-Պարոն Մարգարյան, քաղաքապետարանն ունի լծակներ, մասնավորապես՝ լիցենզիայից զրկելու տվյալ հասատությունը:

Տարոն Մարգարյան

-Ի՞նչ լիցենզիայից զրկել:

Էդուարդ Աղաջանյան

-Օրինակ՝ գիշերային լիցենզիայից:

Տարոն Մարգարյան

-Իսկ մինչև ժամը 12.00-ն եթե աշխատեց ու այդ դեպքերը եղան:

Էդուարդ Աղաջանյան

-Նաև ալկոհոլի վաճառքի լիցենզիան:

Տարոն Մարգարյան

-Հետո, էլի աշխատեց:

Էդուարդ Աղաջանյան

-Չի կարող արդեն աշխատել: Նմանատիպ հաստատությունների հիմնական եկամուտն ալկոհոլի վաճառքից է:

Տարոն Մարգարյան

-Պարոն Աղաջանյան, ուղղակի պոպուլիստական ելույթներ եք ունենում, ցույց եք տալիս, որ Դուք այդ հարցը բարձրացրիք: Դուք լավ գիտեք, որ Ձեր խմբակցության հետ հանդիպման ժամանակ ասել եմ, թե որ օրենքների մեջ ենք նախատեսում փոփոխություններ իրականացնել: Այն օրենքներում, որտեղ նախատեսել ենք փոփոխություններ իրականացնել, Դուք նիստի ժամանակ այդ հարցերն եք ինձ տալիս, որպեսզի ընտրողների մոտ

տպավորություն ստեղծեք, որ Դուք բարձրացրիք այդ հարցը, բայց ես Ձեզ նույնիսկ օրենքների նախագծեր եմ ուղարկել՝ առաջարկություններ ներկայացնելու համար:

Խնդրեմ, պարոն Սիմոնյանն ազնվորեն ասաց, որ առաջարկություն են ներկայացրել, ընդունվել է, թե՝ ոչ: Ասացի, այո՛, ընդունվել է: Նույն այս օրենքի մասին խոսել եմ Ձեր գործընկերների հետ, ասել եմ առաջարկություններ ներկայացրեք: Հիմա Դուք բարձրացնում եք այս հարցը՝ ցույց տալով Ձեր մտահոգությունը, եթե Դուք այսօր եք բարձրացնում այդ հարցերը, մենք այդ ուղղությամբ աշխատում ենք չորս-հինգ տարի:

Տարբեր գերատեսչությունների հետ մշակում ենք օրենսդրական փոփոխություն, որը թե՛ համայնքի, թե՛ այլ ոլորտների համար վաղը խոցելի չլինի: Այո՛, ես կողմ եմ, որ բազմաբնակարան շենքերի, կրթական ու մշակութային օջախների հարակից տարածքներից նման օբյեկտները դուրս գան: Ասել եմ և ասելու եմ, լինելու եմ հետևողական, փորձելու ենք այդ օրենքի նախագիծը ներկայացնել Ազգայի ժողովի քննարկմանը:

Էդուարդ Աղաջանյան

-Պարոն Մարգարյան, ես ծանոթ եմ Ձեր կողմից նշված օրենքի նախագծին՝ խոսքը վերաբերում է ոչ թե բազմաբնակարան շենքերի հարևանությամբ գտնվող նմանատիպ հաստատություններին, նույնիսկ ոչ կրթական հաստատությունների, այլ հաստատությունների, որոնք մեծ հաշվով որևէ հարևան չունեն: Արդյոք կա նմանատիպ հաստատությունների գործունեությունը կասեցնելու որևէ մխանիզմ:

Տարոն Մարգարյան

-Եթե մի հաստատությունում քրեական գործ, խուլիգանություն է անընդհատ արձանագրվում, բնականաբար, իրավապահ մարմինների կողմից մեզ առաջարկություն է ներկայացվում: Այդ առաջարկությունը մենք քննարկում ենք և որոշում՝ այդ կառույցին լիցենզիա տրամադրել, թե՝ ոչ. սրա մասին է խոսքը:

Մենք օրենսդրությամբ ցանկանում ենք հստակ չափորոշիչներ սահմանել, որ բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում, ընդհանրապես բազմաբնակարան շենքերում, կրթական, մշակութային օջախների տարածքներում նման հաստատություններ չլինեն և հստակ լինեն չափորոշիչներ, որն էլ կնպաստի մեր կողմից այդ ամենի կանխմանը: Դրա մասին է խոսքը:

Էդուարդ Աղաջանյան

-Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Հարություն Բաբայան, խնդրե՛մ:

Հարություն Բաբայան

-Շնորհակալություն, ինձ հետաքրքրում էր հետևյալ հարցը, արդյոք որևէ աշխատանք կատարվել կամ տարվել է անձրևաջրերի ջրատարների խնդիրը լուծելու համար, որովհետև եղանակային փոփոխությունները, կարծես, նպաստում են, որպեսզի մենք էլ պատրաստ լինենք:

-Երկրորդ հարցը. արդյոք ինչ-որ միտք կամ գաղափար կա չկարգավորվող խաչմերուկների կամ հետիոտների լուսացույցների ավելացման կամ, եթե բացակայում է, տեղադրման հետ կապված:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Համաձայն Ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա ջուր» ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագրի՝ մայրաքաղաքի ջրահեռացման համակարգի սպասարկումն իրականացվում է «Վեոլիա ջուր» ընկերության կողմից:

Առկա համակարգը մշտապես պրոֆիլակտիկ մաքրման ընթացքում է: Այս պահին մաքրվել են նաև մայրաքաղաքի հեղեղատար բոլոր համակարգերը: Գույքագրված են բոլոր խրոնիկ վայրերը, ի դեպ, խրոնիկ վայրերի ծրագիրը գրեթե մոտենում է իր ավարտին:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ նախագիծ է կազմվել, վերջին վայրը Մաշտոցի թունելի («Ձկան» խանութի մոտ) հետ կապված ջրականգի առաջացումն է: Պատճառն ասեմ. ամբողջ Գրիգոր Լուսավորիչ, Պարոնյան փողոցների այս հատվածը մինչև Արշակունյաց պողոտայի սկիզբ հեղեղատար համակարգ չունի: Եղած ջրերը գալիս, մտնում են Մաշտոցի պողոտա, որտեղ ընդամենը 200 մմ տրամագծով ջրընդունիչ խողովակ է թողված: Նախագիծը քաղաքապետի հանձնարարությամբ արված է, ներկայացրել ենք Ջրային տնտեսության պետական կոմիտե՝ միասին քննարկելու: Այդտեղ նախատեսվում է եռակի մեծացնել խողովակի թողունակությունը և ելքը տալ Հրազդանի կիրճ՝ Արտաշատի ջրանցք: Սա է մնացել միակ կետը, որպես նախագծային լուծում, մնացածը հսկողության ներքո է և խրոնիկ վայրերի խնդիրը գրեթե վերացված է մայրաքաղաքում:

Անցումների կարգավորման հետ կապված՝ Զարուհի Բաթոյանը շատ լավ տեղյակ է այս հարցին, մշտապես հանձնաժողովում քննարկվում էր:

Ճանապարհային ոստիկանության կողմից չկարգավորվող խաչմերուկներում տարբեր ձայնային ազդանշաններով լուսացույցներ տեղադրելու ծրագիրը ընթացքի մեջ է: Ճանապարհային ոստիկանությունը 2018թ. ևս երևի կրկնապատկելու է նման կարգավորման օբյեկտները:

Տարոն Մարգարյան

-«Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամները հանել են իրենց հարցը։

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի՛ անդամներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված։

Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան